ի գերեզմանն, և տեսանէ զկտաւսն՝ զի կային անդ. և Վարշամակն՝ որ էր ի գլուխ նորա՝ ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ ի մի կողմն (P. T. S. հատ. Ը. էջ 419–20)։

Քրիստոսի Վարշամակը, կ'երևի թէ ուրիշ սրբութեանց հետ յետոյ տարուած է Հայաստան, ինչպէս կը կարդանք հետևեալը. «այլ Յոհաննոյ վանքն ուր կայր Վարշամակն Քրիստոսի, և սուրբ բեւեռն աջոյ ձեռին, և սուրբ աջն նախավկային, և բ. կողքն սուրբ Կապտեին» (Ի. Ե. Վ. Վար. Ա. էջ 505)։ Յոհաննոյ վանքին ճակատը քանդակուած էր Քրիստոսի Վարշամակին պատկերը։ «Ի դաւառն Խութայ կայ սուրբ բեւեռն Քրիստոսի, ներկեալ արեամբն Քրիստոսի» (անդ, էջ 516)։

Խաչիկ Ա. կաթողիկոսի 976ի կոնդակէն կը տեղեկանանք որ Մաղարտայ ուխտի եկեղեցւոյն մէջ կային «սեւեռեալ բեւեռն բազկացն Յիսուսի», և անոր հետ «յարքայական թագից փուշ սպակին ճիւղ մի» (Միասական, էջ 516)։ Նմանապէս Յովհաննավանից մէջ կը պահուէր «մասն ինչ ի փուշ սպակեն Քրիստոսի», զոր թուրքերը ԺԷ. դարուն սկիզբն իրենց ասպատակութեան պահուն կորուսին, կ'ըսէ Առաքել պատմիչ (էջ 59)։ Միևնոյն վախճանին կը վիճակի նաեւ «Վարշամակ երեսացն Քրիստոսի» այն որ գերեզմանին մէջ կը ծածկէր իր գլուխը, և որ կը մեծարուէր նոյն մենաստանին մէջ (անդ)։ Նարեկացին կը գրէ թէ Ա. պարանից խաչին հետ Բիւզանդիոնէն բերած էին նաև «զբնաւին վկայս կեցուցիչ մահու վշտացն Յիսուսի», որ էին Ծննդեան խանձարուրքը, Վերնատան սփածաւեղին, ծաղրական ծիրանին, փշեղեն պսակը, բեւեռը՝ որով խաչին գամուեցաւ, և սպունգը՝ որով քացախն